ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 30

23 հունիսի 2011թ.

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 11 հոդվածի 5-րդ կետի դրույթները

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

Կարևորելով Մարալիկ քաղաքի Զերժինսկի, Կոլտնտեսականներ, Երիտասարդականներ, Նոր թաղամասի 10-րդ փողոցի հիմնովին ասֆալտապատման, համայնքային ենթակայության նախադպրոցական հիմնարկի, երաժշտական դպրոցի հիմնանորոգման անհրաժեշտությունը և առաջնորդվելով քաղաքի զարգացման քառամյա ծրագրով, ի նկատի ունենալով համայնքի բյուջեի սուղ հնարավորությունները խնդրվում է 2012 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքին տրամադրել սուբվենցիա նշված ծրագրերը իրականացնելու համար:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է

23 հունիսի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 31 - Ն

23 հունիսի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ

ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության □Հողային օրենսգրքի□ 74 հոդվածով, 56 հոդվածի 5-րդ, 8-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2. դրույթով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից Մարալիկ քաղաքի Հր. Շահինյան փողոցի նախկին ԱՏՁ-ի տարածքում ավտոտնակներ կառուցելու նպատակով (ծածկագիր 08-003-0029-0026) 210 քառակուսի մետր հողատարածքը տրամադրել կառուցապատման իրավունքով :
2. Հողատարածքի մեկնարկային վարձավճարի չափ հաստատել բնակավայրի հողի հարկի տարեկան դրույքաչափը:

Կ. ԱՌԱՔԵԼՅԱՆ-ԿՈՂՄ

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ- ԿՈՂՄ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

Խ. ԲՈՒԼՈՅԱՆ-ԿՈՂՄ

Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ-ԿՈՂՄ

Վ. ՍԱՀԱԿՅԱՆ-ԿՈՂՄ

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

23 հունիսի 2011 թվական

ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 32

23 հունիսի 2011 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 5-րդ կետով, ինչպես նաև Համահայկական խաղերին

մասնակցելու իրավունք ստանալու համար Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի կանոնակարգի համաձայն տարեկան անդամավճար փոխանցելու նպատակով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի վարչական մասի 01.3.3.51 դասակարգման (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) 4639 (այլ ընթացիկ դրամաշնորհներ) հոդվածից 75000 (յոթանասունհինգ հազար) դրամ հատկացնել Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեին՝ որպես Մարալիկ համայնքի 2011 թվականի անդամավճար:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

23 հունիսի 2011 թվական

ք. Մարալիկ